ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 մայիսի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

64
(3273)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-Ի ՀԱՐՑԸ ՉԻ ՔՆՆԱՐԿՎԵԼ

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը, պատասխանելով «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանը, չի հայտնել՝ արդյոք Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի՝ Հայաստան կատարած այցի ընթացքում հայկական կողմը բարձրացրել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի գործունեության արդյունավետության, ջրակորուստների եւ կոնցեսիոն պարտավորությունների կատարման հարցերը:

«Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝նախարարությունը նշել է, որ «Վեոլիա Ջուր» ընկերության հետ կնքված վարձակալության պայմանագրով եւ համաձայնագրերով սահմանված դրույթների համաձայն՝ ՀՀ կառավարությունը՝ ի դեմս ՏԿԵՆ ջրային կոմիտեի, եւ ընկերությունը 2024 թվականից համատեղ իրականացնում են ենթակառուցվածքների արդիականացման աշխատանքներ, որոնք շարունակվելու են մինչեւ 2031 թվականը:

Նախարարության պատասխանում ասվում է, որ աշխատանքները միտված են «խմելու ջրամատակարարման համակարգերի եւ ծառայությունների որակի բարելավմանը», ինչպես նաեւ՝ «ջրակորուստների նվազեցմանը»:

Միեւնույն ժամանակ ՏԿԵՆ-ը չի տրամադրել տեղեկություն այն մասին, թե արդյոք Մակրոնի հետ հանդիպումներում քննարկվել են «Վեոլիա Ջուր» ընկերության նկատմամբ հանրային եւ ինստիտուցիոնալ մտահոգությունները: Փոխարենը նախարարությունը հայտնել է, որ Ֆրանսիայի նախագահի՝ Հայաստան այցի վերաբերյալ «ՀՀ կառավարությունը մամուլի հաղորդագրությունների միջոցով տրամադրել է համապատասխան տեղեկատվություն», իսկ ՏԿԵՆ-ը հավելյալ տեղեկատվության չի տիրապետում:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Նիկոլ Փաշինյանի նախընտրական քարոզարշավը գնալով ավելի քիչ է հիշեցնում քաղաքական ծրագրերի, գաղափարների ու հաշվետվության ներկայացում եւ ավելի շատ վերածվում է ընդդիմախոսներին եւ ընդդիմադիր էլեկտորատին վիրավորելու, վարկաբեկելու եւ սպառնալու գործընթացի: Հանրային հարթակներում ու քաղաքացիների հետ շփումներում ձեւավորվում է մի խայտառակ պատկեր. իշխանության ղեկավարը, փոխանակ խոսի երկրի խնդիրների, ծրագրերի եւ պատասխանատվության մասին, հաճախ ափերից դուրս է գալիս, անձնավորում քաղաքական պայքարը եւ այն տեղափոխում է վիրավորական բառապաշարի դաշտ: Տպավորությունն այնպիսին է, որ ՔՊ քարոզչության ամբողջ հրապարակային ծանրությունը Փաշինյանն անձամբ է վերցրել իր վրա: Մինչդեռ շտաբներում, ըստ քաղաքական դաշտից մեզ հասնող տեղեկությունների, ակտիվ գործում են ընտրական նախկին գործընթացներից հայտնի «տասովշիկները», իսկ քաղաքական թիմի զգալի մասը հիմնականում ապահովում է զանգվածային ներկայություն՝ գլխաքանակ:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Ի կողմից Նիկոլ Փաշինյանի իշխանությունը սկսել է Արցախի ներկայացուցչության շենքը վերցնելու եւ Արցախի պետական ինստիտուտների գործունեությունը փաստացի չեզոքացնելու գործընթաց, սակայն արցախյան շրջանակներում, ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների, հակառակ գործընթացն է հասունանում. քննարկվում է Արցախի ինստիտուտների, այդ թվում՝ նախագահի ինստիտուտի լիարժեք գործունեության վերականգնման հարցը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ամիսներ առաջ արցախյան մի շարք հասարակական կազմակերպություններ համատեղ դիմել էին Արցախի ԱԺ նախագահ Աշոտ Դանիելյանին եւ խորհրդարանական խմբակցություններին՝ բարձրացնելով մի շարք սկզբունքային հարցեր: Դրանք վերաբերում էին Արցախի պետական ինստիտուտների ամբողջական եւ լիարժեք գործունեությանը, Արցախում պարբերաբար շրջանառվող ֆինանսական չարաշահումների վերաբերյալ պարզաբանումներին, ինչպես նաեւ այլ հրատապ խնդիրների:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ երեկ ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի իրականացրած լայնածավալ գործողությունների շրջանակում խուզարկվել է նաեւ ոստիկանության գնդապետ Նաիրի Սուքիասյանի տունը: Բանն այն է, որ Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում, որը վերաբերում է ընտրակաշառք ստանալու եւ բարեգործության արգելքը խախտելու ենթադրյալ դեպքերին, ձերբակալվել են մի խումբ անձինք: Մեր տեղեկություններով՝ նրանք «Ուժեղ Հայաստան» կուսակցության համակիրներ են: Ձերբակալվածների թվում եղել է նաեւ երկու կին: Նույն գործընթացի շրջանակում իրավապահների ուշադրության կենտրոնում է հայտնվել նաեւ ոստիկանության գնդապետ Նաիրի Սուքիասյանը. ըստ «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների՝ իրավապահները խուզարկել են նաեւ նրա բնակարանը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՊԵՏՔ Է ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐՈՎ»

ArmLur.am-ը զրուցել է պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի հետ:

- Ինչպե՞ս եք գնահատում ձեր քաղաքական ուժի հնարավորությունները եւ շանսերը առաջիկա ընտրություններում:

- Ժողովրդի աջակցությունը բավականին բարձր է: Դա երեւում է թե՛ սոցիոլոգիական հարցումներից, թե՛ քաղաքացիների հետ անմիջական շփումներից: Նիկոլ Փաշինյանի եւ իշխանության նկատմամբ կա վստահություն, մարդիկ գնահատում են այս տարիների ընթացքում կատարված աշխատանքը:

- Բայց հասարակությունում նաեւ դժգոհություններ կան: Ինչպե՞ս եք դրանք գնահատում:

- Իհարկե, ցանկացած երկրում կան թերություններ ու բացթողումներ, Հայաստանն էլ բացառություն չէ: Բայց եթե ընդհանուր պատկերն ենք գնահատում, ապա շատ լավ աշխատանք է կատարվում: Մարդիկ դա տեսնում են ու գնահատում:

- Ձեր կարծիքով՝ այս 8 տարիների ընթացքում ո՞րն է եղել ամենամեծ բացթողումը:

- Կարծում եմ՝ շատ ծրագրեր կարող էին ավելի արագ իրականացվել, եթե պատերազմը չլիներ: Պատերազմը խանգարեց թե՛ ֆինանսական առումով, թե՛ արտաքին քաղաքականության, թե՛ բանակցությունների ընթացքի տեսանկյունից: 2018 թվականի հեղափոխությունից հետո մարդիկ այլ սպասումներ ունեին, բայց հետագա իրադարձությունները դանդաղեցրին գործընթացները:

-Այսինքն՝ կարծում եք, որ հիմա նոր փուլ է սկսվո՞ւմ:

- Այո՛, հատկապես խաղաղության պայմաններում Հայաստանը կարող է լրիվ նոր որակ ստանալ: Ստեղծվելու են նոր ենթակառուցվածքներ, որոնք փոխելու են երկրի տնտեսական տրամաբանությունն ու կառուցվածքը:

- Ընտրություններում հիմնական մրցակիցը ո՞ւմ եք համարում:

- Ցանկացած երկրում հիմնական մրցակիցը ընդդիմադիր տրամադրված հատվածն է: Թե որ քաղաքական ուժը որքան աջակցություն կստանա, դա արդեն պարզ կլինի ընտրություններից հետո: Այս պահին կան մի քանի ուժեր, որոնք հանդես են գալիս ընդդիմադիր կոչերով:

- Վերջերս մամուլում տեղեկություններ տարածվեցին, թե Աղվերանում հանդիպում է եղել Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւի հետ: Ի՞նչ կասեք դրա մասին:

- Ես անձամբ այդ հանդիպմանը ներկա չեմ եղել: Տեղյակ եմ, որ մեր տնօրենն է մասնակցել: Մամուլում նույնիսկ գրել էին, թե իմ մեքենան է եղել այնտեղ, բայց դա իրականությանը չի համապատասխանում: Այնուամենայնիվ, եթե նման հանդիպումները նպաստում են Հայաստանի տնտեսությանը, ես միայն ողջունում եմ:

- Կարծում եք, որ տնտեսական համագործակցությունը կարեւոր է նույնիսկ Ադրբեջանի՞ հետ:

- Իհարկե: Եթե ցանկանում ենք, որ մարդիկ մնան Հայաստանում, շատանան, ընտանիքներ կազմեն, դրա հիմքում պետք է լինի ուժեղ տնտեսությունը: Առանց տնտեսության պետությունը թույլ է լինում, եւ ցանկացած արտաքին ուժ կարող է ազդել նրա վրա:

- Իսկ Ադրբեջանի հետ հարաբերությունների ներկա վիճակը ինչպե՞ս եք գնահատում:

- Ես կարծում եմ, որ եթե պետությունները պայմանավորվում են խաղաղության մասին, ապա պետք է հետեւողական լինեն այդ ճանապարհին: Չի կարելի մի կողմից խոսել խաղաղության մասին, մյուս կողմից սրել իրավիճակը հայտարարություններով:

- Բայց ադրբեջանական կողմից հաճախ հնչում են նաեւ կոշտ հայտարարություններ:

-Նման հայտարարությունները հաճախ պայմանավորված են նաեւ մեր ներսում հնչող խոսույթով: Երբ տարբեր մարդիկ ասում են՝ «պետք է վերադառնանք» կամ «պետք է հետ վերցնենք», դա նույնպես լարվածություն է առաջացնում: Պետք է առաջնորդվել միջազգային նորմերով եւ շարժվել խաղաղության ճանապարհով:

- Կարծում եք, որ երկու կողմերն էլ պետք է ավելի զո՞ւսպ լինեն:

- Այո՛: Եթե կա պայմանավորվածություն գնալ խաղաղության, ապա պետք է այդ ուղղությամբ հետեւողական քայլեր անել: Ես ողջունում եմ, որ երկու երկրների պաշտոնյաներն այսօր ավելի շատ խոսում են միջազգային նորմերի պահպանման եւ խաղաղության մասին:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԵՄ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Եվրամիությունում ենթադրվում է Ռուսաստանի ուղղափառ եկեղեցու առաջնորդ պատրիարք Կիրիլի նկատմամբ պատժամիջոցներ սահմանելու հնարավորությունը, այն բանից հետո, երբ Հունգարիան, ըստ աղբյուրների, ազդանշան է տվել, որ պատրաստ է այլեւս չարգելափակել այդ որոշումը:

Euronews-ի տեղեկություններով՝ ԵՄ անդամ երկրների դեսպանները այս շաբաթ քննարկելու են «փոքր» պատժամիջոցային փաթեթ, որը կարող է ներառել մոտ տասը անձանց եւ մի քանի ռուսական նավերի ցուցակ: Աղբյուրների համաձայն՝ այդ ցուցակում ներառված են նախկինում Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանի կառավարության կողմից պաշտպանված անձինք: Նրանց թվում կարող է լինել նաեւ պատրիարք Կիրիլը, ում ԵՄ-ն արդեն 2022 թվականին փորձել էր ներառել սանկցիաների ցուցակում՝ նրան մեղադրելով Ուկրաինայի պատերազմի աջակցման եւ քարոզչության տարածման մեջ, սակայն Հունգարիան այն ժամանակ արգելափակել էր որոշումը՝ այն ներկայացնելով որպես կրոնական ազատության հարց:

Նոր քաղաքական իրավիճակում, ըստ աղբյուրների, Բուդապեշտը պատրաստ է փոխել իր դիրքորոշումը: ԵՄ-ն հույս ունի, որ Վիկտոր Օրբանին փոխարինած Պետեր Մագյարը ավելի քիչ կօգտագործի վետոյի մեխանիզմը եւ չի խոչընդոտի միասնական որոշումներին:

Միեւնույն ժամանակ, Հունգարիայի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Մարտոն Հաջդուն հայտարարել է, որ իրենք դեմ են այնպիսի պատժամիջոցների, որոնք կարող են վնասել Հունգարիայի տնտեսական կայունությանը, սակայն չեն բացառվում այն դեպքերը, երբ նախկին իշխանությունները օգտագործել են վետոն՝ քաղաքական նպատակներով:

ԵՄ շրջանակներում քննարկվում է նաեւ ռուսական «ստվերային նավատորմի» դեմ նոր քայլերի իրականացումը: Այդ նավերը, ըստ արեւմտյան երկրների, օգտագործվում են պատժամիջոցները շրջանցելու համար՝ մասնավորապես նավթի արտահանման ոլորտում:

Եվրամիության արտաքին քաղաքականության ղեկավար Կայա Կալասը հայտարարել է, որ ԵՄ-ն պատրաստ է ավելի արագ եւ փուլային կերպով սահմանել սահմանափակումներ՝ առանց երկար սպասելու մեծ պատժամիջոցային փաթեթների հաստատմանը: Նոր նախաձեռնության շրջանակում ԵՄ դեսպանները առաջին քննարկումը կունենան այս շաբաթ, իսկ վերջնական որոշումը նախատեսվում է ընդունել հունիսի 15-ին կայանալիք Արտաքին գործերի խորհրդում:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԱՐՏԻ 1-Ը՝ ԳՈՐԾԻՔ

«Մարտի 1-ը տարիներ շարունակ վերածվել է նախընտրական շահարկման գործիքի, մինչդեռ հասարակությունը շարունակում է սպասել իրական քաղաքական եւ իրավական գնահատականների»: Այս մասին հայտարարել է Էդմոն Մարուքյանը: ԼՀԿ-ն քարոզարշավի հերթական օրը մեկնարկել է Մարտի 1-ի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի մոտ՝ բացօթյա կարճ փոդքասթի ձեւաչափով: «Իշխանությունը պահելու համար Փաշինյանը պատրաստ է արյան», - հայտարարել է Կարպիս Փաշոյանը: Նրա խոսքով՝ ժողովրդավարությունը չի կարող սահմանափակվել արտաքին ցուցադրական ժեստերով, քանի դեռ քաղաքացին բախվում է նվաստացման, բռնության եւ այլակարծության նկատմամբ անհանդուրժողականության: Նա ընդգծել է, որ այլեւս երբեք ՀՀ քաղաքացու արյունը չպետք է թափվի քաղաքական իշխանությունը պահելու համար:

ԱՎԱՐՏԵՑ

Եվրոպական հանձնաժողովը (ԵՀ) եւ Կիեւը հունիսի կեսերին ավարտեցին բանակցությունները Ուկրաինային 2026-2027 թվականների 90 միլիարդ եվրոյի ֆինանսավորման փաթեթի շրջանակներում 3,2 միլիարդ եվրո բյուջետային սուբսիդիաներ տրամադրելու վերաբերյալ: Այս մասին լրագրողներին հայտարարեց տնտեսության հարցերով եվրահանձնակատար Վալդիս Դոմբրովսկիսը: «Մենք ավարտել ենք բանակցությունները Ուկրաինայի հետ փոխըմբռնման հուշագրի (որը ամփոփում է ԵՄ պահանջները բարեփոխումների վերաբերյալ ֆինանսավորման դիմաց, որը անհրաժեշտ է Ուկրաինային բյուջետային օգնություն տրամադրելու համար», - ասել է Դոմբրովսկիսը: Նա պարզաբանել է, որ 3,2 միլիարդ եվրոյի տրանշը կհատկացվի «հունիսի կեսերին», եթե հուշագիրը «վավերացվի Ուկրաինայի խորհրդարանի կողմից»:

ԱՌԱՋԱՐԿԵԼ ԵՆ

Ավստրիան, Իտալիան, Սլովակիան, Սլովենիան եւ Չեխիան կոչ են արել Եվրոպական հանձնաժողովին վերանայել Արեւմտյան Բալկանների պոտենցիալ անդամ պետություններին ԵՄ միասնական շուկա ներգրավելու իր մոտեցումը: Սա նպատակ ունի կանխելու նրանց Ռուսաստանի եւ Չինաստանի ազդեցության ոլորտ ընկնելը, հաղորդում է Euractiv-ը՝ հղում անելով ԵՄ փաստաթղթին: «Ընդլայնման թափը պահպանելու եւ եվրոպական ինտեգրացիան առաջ մղելու համար անհրաժեշտ են ուժեղ եւ գրավիչ խթաններ», - գրել են փաստաթղթի հեղինակները, որոնք քաղաքական աջակցություն են ցուցաբերում Ալբանիայի, Հյուսիսային Մակեդոնիայի, Սերբիայի եւ Չեռնոգորիայի ԵՄ անդամակցության ձգտումներին: Նրանք կարծում են, որ նոր մոտեցումը կօգնի ԵՄ-ին ամրապնդել իր աշխարհաքաղաքական ազդեցությունը եւ հակադրվել Մոսկվայի կամ Պեկինի ազդեցությանը: Հեղինակները առաջարկվող մոդելը նկարագրում են որպես «համակարգված ոլորտային ինտեգրացիա»: «Աստիճանական ինտեգրացիան պետք է ակտիվորեն եւ համակարգված կիրառվի, երբ թեկնածու երկիրը համապատասխան բաժնում ցույց է տվել ԵՄ օրենսդրության բարձր մակարդակ», - նշվում է փաստաթղթում:

ՄՏԱԴԻՐ Է ՆԱՎԵՐ ՈՒՂԱՐԿԵԼ

Հնդկաստանը մտադիր է իր դրոշի տակ գտնվող տանկերները Մերձավոր Արեւելքի հակամարտության սկսվելուց ի վեր առաջին անգամ ուղարկել Հորմուզի նեղուց՝ Պարսից ծոցի երկրներից էներգակիրներ մատակարարելու համար: «Economic Times»-ը, հղում անելով կառավարության աղբյուրներին, հաղորդում է, որ Հնդկաստանի պետական նավագնացության կորպորացիայի նավերը կսկսեն Հորմուզի նեղուցով տարանցման փորձերը՝ Հնդկաստանի կաբինետի հաստատումը ստանալուց, Հնդկաստանի ռազմածովային ուժերի հետ համակարգելուց եւ նավթավերամշակման գործարանների հետ պայմանագրեր կնքելուց հետո: Նավագնացությունը խոչընդոտող Միացյալ Նահանգների եւ Իրանի թույլտվությունը կարեւոր կլինի հնդկական նավերի Հորմուզի նեղուցով անցումն ապահովելու համար: Այս երկրների դիրքորոշումները մնում են անորոշ, նշել են հրատարակության աղբյուրները:

ԿԵՐԿԱՐԱՁԳԻ

Չինաստանը որոշել է Ռուսաստանի հետ առանց վիզայի ճանապարհորդությունը երկարաձգել մինչեւ 2027 թվականի վերջը: Այս մասին ճեպազրույցի ժամանակ հայտարարել է Չինաստանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Գո Ցզյակունը: «Չինաստանի եւ Ռուսաստանի միջեւ մարդասիրական փոխանակումները հետագայում հեշտացնելու համար Չինաստանը որոշել է Ռուսաստանի քաղաքացիների համար առանց վիզայի ճանապարհորդությունը երկարաձգել մինչեւ 2027 թվականի դեկտեմբերի 31-ը: Սովորական անձնագրեր ունեցող Ռուսաստանի քաղաքացիները կարող են մուտք գործել Չինաստան գործուղումների, զբոսաշրջության, հարազատներին եւ ընկերներին այցելելու, փոխանակման կամ տարանցիկ ճանապարհորդության համար մինչեւ 30 օր՝ առանց վիզայի», - նշել է նա:

ՊԵՍԿՈՎԸ ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Անօդաչու թռչող սարքերն արդեն թռչում են Բալթյան երկրների օդային տարածքում: Այս մասին «Իզվեստիա» թերթին ասել է Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը՝ մեկնաբանելով Ռուսաստանի արտաքին հետախուզության ծառայության հաղորդագրությունը, որ Ուկրաինան պատրաստվում է հարվածներ հասցնել Ռուսաստանին Լատվիայի տարածքից: Նրա խոսքով՝ համապատասխան ռուսական ծառայությունները, առաջին հերթին՝ զինվորականները, ուշադիր հետեւում են անօդաչու թռչող սարքերի իրավիճակին եւ մշակում են Մոսկվայի անհրաժեշտ արձագանքը: Կրեմլի խոսնակը ընդգծել է, որ գլխավոր առաջնահերթությունը երկրի քաղաքացիների եւ արդյունաբերական ենթակառուցվածքների անվտանգության ապահովումն է:

ԸՆԴԴԻՄԱԴԻՐԻՑ՝ ԱՆԿԱԽ

ԳԵՂԱՄ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Ազգային Ժողովի երբեմնի ընդդիմադիր, այսօր արդեն անկախ պատգամավոր Գեղամ Նազարյանի 2025 թվականի հայտարարագիրը ոչ միայն թվերի ու գույքի ցանկ է, այլեւ քաղաքական կերպարանափոխության ֆոնին ձեւավորված ֆինանսական պատկերի արտացոլում:

2021 թվականին «Հայաստան» դաշինքի ցուցակով խորհրդարան մտած, իշխանությունների հասցեին ամենակոշտ քննադատություններ հնչեցնող պատգամավորներից մեկը՝ Գեղամ Նազարյանը, այսօր այլեւս ընդդիմադիր դաշտի լիարժեք ներկայացուցիչ չի համարվում: Նրա քաղաքական դիրքավորման փոփոխությունը հատկապես ընդգծվեց այն բանից հետո, երբ հրապարակայնորեն հայտարարեց, թե Նիկոլ Փաշինյանին հեռացնելու օրակարգ գոյություն չունի: Այդ հայտարարությունը ժամանակին պայթեցրեց ընդդիմադիր ճամբարը, իսկ «Հայաստան» խմբակցությունում շտապեցին հայտարարել՝ Նազարյանի խոսքերը խմբակցության տեսակետը չեն արտահայտում: Արդյունքում նա հեռացավ խմբակցությունից ու դարձավ անկախ պատգամավոր:

Այս քաղաքական շրջադարձին զուգահեռ հետաքրքիր է նաեւ նրա ֆինանսական ու գույքային պատկերը: 2025 թվականի հայտարարագրի համաձայն՝ Նազարյանը Երեւանում համատեղ սեփականությամբ բնակարան ունի, որը ձեռք է բերել 2023 թվականին: Բացի այդ, պատգամավորին է պատկանում Էրեբունի վարչական շրջանում գտնվող բնակարանի 2/3 բաժնեմասը, որը ստացել է ժառանգությամբ: Տավուշի մարզի Կիրանց համայնքում էլ նա ժառանգաբար ստացել է անհատական բնակելի տուն:

Հաշվետու տարվա ընթացքում Իջեւանում գտնվող անշարժ գույքը օտարվել է նվիրատվության միջոցով:

Ֆինանսական միջոցների մասով պատկերը բավականին ուշագրավ է: Անկախ պատգամավորի բանկային հաշիվներին հաշվետու տարվա վերջում եղել է ընդամենը 1 միլիոն 350 հազար դրամ, մինչդեռ կանխիկ միջոցները կազմել են 3 միլիոն 400 հազար դրամ եւ 51 հազար դոլար: Փաստացի, Նազարյանը նախընտրում է զգալի գումար պահել կանխիկ տարբերակով:

Պատգամավորը հայտարարագրել է նաեւ 2010 թվականի արտադրության SUZUKI մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերել 2021 թվականին՝ պատգամավոր ընտրվելու տարում:

Տարեկան եկամուտները կազմել են 16 միլիոն 160 հազար 565 դրամ: Դրանց ճնշող մեծամասնությունը՝ ավելի քան 13,5 միլիոն դրամը, ստացվել է Ազգային Ժողովի աշխատակազմից՝ աշխատավարձի եւ դրան հավասարեցված վճարումների տեսքով: Եւս 2,5 միլիոն դրամ էլ նա ստացել է եկամտային հարկի վերադարձի շրջանակում: Միաժամանակ, միայն վարկերի մարմանը ուղղվել է ավելի քան 4,3 միլիոն դրամ:

Սակայն հայտարարագրի ամենաուշագրավ հատվածներից մեկը վերաբերում է ընտանեկան բիզնես կապերին: Պարզվում է՝ պատգամավորի որդին «ՆԵՈՊՐԵՍՍ» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնետերն ու տնօրենն է: Ընկերությունը Topnews.am լրատվական կայքի պատասխանատու կազմակերպությունն է:

Այսպիսով, նախկին ընդդիմադիր պատգամավոր Գեղամ Նազարյանի հայտարարագիրը ցույց է տալիս ոչ միայն նրա ունեցվածքի ծավալն ու դրամական միջոցները, այլ նաեւ քաղաքական վերադասավորումների ֆոնին ձեւավորված նոր իրականությունը: Մինչ նախկին թիմակիցները շարունակում են իշխանափոխության օրակարգ առաջ տանել, Նազարյանը, կարծես, ընտրել է առավել «չեզոք» քաղաքական ուղի՝ զուգահեռաբար պահպանելով կայուն եկամուտներ, անշարժ գույք եւ ընտանեկան բիզնես շահեր:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Ի պատասխան զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կողմից ստացված հարցումների՝ տեղեկացնում ենք, որ Դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության լիազորության շրջանակում, ուսումնասիրել է ՀՀ Կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 1465-Ա որոշմամբ օտարված՝ «Արարատցեմենտ» ընկերության մասնավորեցման գործընթացը:

Ուսումնասիրությամբ ձեռք բերված առերեւույթ հանցագործության հատկանիշներ պարունակող փաստերի կապակցությամբ դատախազը 2026 թվականի մայիսի 5-ին հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե:

Հաղորդման հիման վրա 2026 թվականի մայիսի 7-ին նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը, որն անզգուշությամբ առաջացրել է այլ ծանր հետեւանք) (2 դրվագ) եւ 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի (առանձնապես խոշոր չափերով փողերի լվացումը) հատկանիշներով:

Հաղորդման հիմքում, ի թիվս այլ հայտնաբերված խախտումների, ներառվել են մասնավորեցման գործընթացի հետ կապված մի շարք հանգամանքներ, մասնավորապես.

ՀՀ Կառավարության 2001 թվականի հուլիսի 31-ի թիվ 690 որոշմամբ ձեւավորվել է մրցութային հանձնաժողով՝ «Արարատցեմենտ» ընկերության՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մրցույթով մասնավորեցնելու նպատակով:

Գնման առաջարկ է ներկայացվել «Holcim LTD» շվեյցարական եւ «SK.Ajikawo Group» անգլիական կազմակերպությունների կողմից:

2001 թվականի սեպտեմբերի 26-ին կայացած մրցույթում հաղթող է ճանաչվել «Holcim LTD» շվեյցարական կազմակերպությունը, սակայն 2001 թվականի հոկտեմբերի 22-ին վերջինս Պետական գույքի կառավարման նախարարին հասցեագրած գրությամբ հայտնել է, որ կազմակերպության տնօրենների խորհուրդն առանց պատճառաբանությունների մերժել է ներդրումային ծրագիրը:

ՀՀ Կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 1465-Ա որոշմամբ «Արարատցեմենտ» ընկերության՝ պետական սեփականություն հանդիսացող 317.003 բաժնետոմսերը՝ յուրաքանչյուրը 10.000 դրամ անվանական արժեքով, ուղղակի վաճառքով մասնավորեցվել են «Ռոբերտո» բելգիական կազմակերպությանը: Նույն որոշման 2-րդ կետով՝ մասնավորեցվող բաժնետոմսերի գին է սահմանվել 200.000 ԱՄՆ դոլարը: «Ռոբերտո» ընկերության հիմնադիրները, սակայն, եղել են ՀՀ քաղաքացիներ Ազատ, Ռոբերտ եւ Ռոման Մուրադյանները, որոնցից յուրաքանչյուրի բաժնեմասը կազմել է 250.000 բելգիական ֆրանկ (այն ժամանակ եվրոն դեռ գործածության մեջ չէր): Այսինքն՝ ընկերության ընդհանուր կապիտալը եղել է 750.000 ֆրանկ (հավասար է 18.592 եվրոյի):

«Ռոբերտո» ընկերության կառավարիչ է նշանակվել Վահագն Գուլոյանը, ով ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Գագիկ Ծառուկյանի խնամու՝ նախկին պատգամավոր Մուրադ Գուլոյանի կրտսեր եղբայրն է, Ծառուկյանի փեսայի՝ Կոտայքի նախկին մարզպետ Կարապետ Գուլոյանի հորեղբայրը:

«Արարատցեմենտ» ընկերությունը մասնավորեցնելու՝ ՀՀ Կառավարության որոշումից 6 ամիս անց՝ 2003 թվականի մարտի 23-ին, «Ռոբերտո» ընկերության ժողովը որոշել է ընկերության միանձնյա կառավարիչ նշանակել Գագիկ Ծառուկյանին՝ առանց ժամկետի սահմանափակման:

2003 թվականի հունիսի 26-ին Բրյուսելի դատարանը հայտարարել է «Ռոբերտո» ընկերության լուծարման գործընթացի մասին, որն ավարտվել է 5 տարի անց՝ 2008 թվականի դեկտեմբերի 18-ին:

Վարույթի քննությանը զուգահեռ՝ Դատախազությունը շարունակել է իրականացնել պետական շահերի պաշտպանության լիազորությունից բխող իր գործառույթները, այդ թվում՝ 2026 թվականի մայիսի 5-ին գրություն է հասցեագրել ՀՀ Կառավարություն՝ առաջարկելով քննարկել ընկերությունում առկա խախտումները եւ դրանց հետեւանքները վերացնելու նպատակով պատշաճ վարչարարություն իրականացնելու, այդ թվում, օրինակ, ընկերությունում ժամանակավոր կառավարիչ նշանակելու նպատակահարմարությունը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՍԵՎԱՆԱ ԼԻՃ

ԱՊԱՄՈՆՏԱԺՎԵԼ Է 119 ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Սեւանա լճի՝ բացարձակ նիշից ցածր 42 հողամասերում ապամոնտաժվել է 119 շենք-շինություն: Այս մասին հայտնում են ՀՀ գլխավոր դատախազությունից: 2025 թվականի դեկտեմբերից առ այսօր՝ Դատախազության միջնորդագրերի կատարման արդյունքում, Սեւանա լճի ափամերձ՝ բացարձակ նիշից ցածր 42 հողամասերում ապամոնտաժվել (քանդվել) է ապօրինի կառուցված՝ հիմնական եւ ոչ հիմնական 119 շենք-շինություն, «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից լուծվել (դադարեցվել) է 2 պայմանագիր:



Հիշեցնենք, որ Դատախազությունը 2025 թվականի դեկտեմբերի 11-ին հայտարարել էր, որ մեկնարկել են Սեւանա լճի ափամերձ տարածքներում՝ բացարձակ նիշից ցածր հողամասերում ապօրինի կառուցված շենք-շինությունների ապամոնտաժման աշխատանքները: Դատախազությունը միաժամանակ տեղեկացրել էր, որ ապօրինի շինությունների քանդման աշխատանքները շարունակվելու են 2026 թվականին:

2026 թվականի մարտին, դատախազի միջնորդագրերի հիման վրա, ապամոնտաժվել են եւս 11 հողամասերում գտնվող 16 շինություններ, այդ թվում՝ ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին փաստացի պատկանող առանձնատան՝ բացարձակ նիշից ցածր հատվածում գտնվող պարիսպները եւ թեքահարթակը (Դատախազությունն առանձնատան վերաբերյալ հայց է ներկայացրել իրավասու դատարան), ՀՀ Ազգային ժողովի նախկին նախագահ Սամվել Նիկոյանի որդուն փաստացի պատկանող առանձնատունը:

Հիշեցնենք նաեւ, որ 2026 թվականի փետրվարի 24-ին ապամոնտաժվել են ՀՀ կրթության եւ գիտության նախկին նախարար Արմեն Աշոտյանի եղբոր կողմից՝ բացարձակ նիշից ցածր հողամասում ապօրինի կառուցված քոթեջը, ինչպես նաեւ Գեղարքունիքի նախկին մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի որդու՝ Կարեն Ռաֆիկի Գրիգորյանի կողմից ապօրինի կառուցված քոթեջը: Հատկանշական է, որ նշված քոթեջները կառուցված են եղել հողամասերում, որոնց նկատմամբ կառուցապատողները նույնիսկ վարձակալության իրավունք չեն ունեցել:

Դատախազությունը 2026 թվականի փետրվարի 2-ին տեղեկացրել էր, որ 2026 թվականի փետրվարի 2-ին ապամոնտաժվել են ՀՀ ոստիկանության նախկին պետ Վլադիմիր Գասպարյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատան՝ բացարձակ նիշից ցածր հատվածում գտնվող պարիսպը, բետոնե հենապատերը, թեքահարթակը եւ այլ շինություններ (Դատախազությունը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցով, ի թիվս այլնի, պահանջում է Վլադիմիր Գասպարյանից ու նրան փոխկապակցված անձանցից բռնագանձել այս առանձնատունը):

Հիշեցնենք, որ վերոնշյալ միջնորդագրերից բացի, Դատախազության կողմից դատարան են ներկայացվել հայցեր, որոնք, ի թիվս այլոց, վերաբերում են.

Ոստիկանության նախկին պետ Վլադիմիր Գասպարյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատանը (-Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոց 97 հասցե), «Հարսնաքար» հյուրանոցի վարչական համալիրին (Սեւան քաղաքի Երեւանյան խճուղի 50 հասցե), «Հարսնաքար» հյուրանոցի քոթեջներին (Սեւան քաղաքի Երեւանյան խճուղի 48/6 հասցե), Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախկին նախագահ, ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատանը (Սեւան քաղաքի Հանգստի գոտի 3-րդ փողոց 38 հասցե), ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատանը (Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցե), «Կապավոր» ՍՊ ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Արման Հակոբջանյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատանը (-Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոց 88 հասցե):

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության եւ Գեղարքունիքի մարզի դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում, հանցագործության մասին հաղորդումներ են ուղարկվել նախաքննական մարմիններ, նախաձեռնվել են քրեական վարույթներ:

Դատախազությունը 2026 թվականի մայիսի 12-ին տեղեկացրել էր նաեւ, որ Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը միջնորդագրեր է ուղարկել «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) տնօրենին եւ Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարին՝ ՊՈԱԿ-ի եւ Նազիկ Ամիրյանի միջեւ 2007 թվականի դեկտեմբերի 26-ին, ինչպես նաեւ ՊՈԱԿ-ի եւ Վարշամ Ղարիբյանի միջեւ 2005 թվականի օգոստոսի 2-ին եւ 2006 թվականի հունվարի 19-ին կնքված՝ Սեւանա լճի ափամերձ հողամասերի վարձակալության պայմանագրերը լուծելու (դադարեցնելու) ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Ի պատասխան քաղաքացիների այն մտահոգությանը, թե «ինչո՞ւ եք ապամոնտաժում շենքը, եթե այն կարելի է տալ սոցիալապես անապահով ընտանիքներին», տեղեկացնենք, որ Սեւանա լճի 1905.0 մետր բացարձակ նիշից ցածր տարածքները հանդիսանում են ջրածածկման ենթակա եւ ափամերձ պահպանության գոտի: Կառավարության՝ 2008 թվականի դեկտեմբերի 18-ի 1563-Ն որոշմամբ սահմանված է, որ Սեւանա լճի մակարդակի բարձրացման հետեւանքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ջրածածկման եւ ողողման ենթակա տարածքները ներառում են «Սեւան» ազգային պարկի լճի ջրային սահմանից մինչեւ 1905.0 մետր բացարձակ նիշը:

Այսպիսով՝ ապամոնտաժվող կառույցներն «այլ նպատակով փոխանցելու» առաջարկներն իրավական հիմք չունեն, քանի որ՝

Դրանք գտնվում են ջրածածկման ռիսկի ներքո եւ կարող են հայտնվել ջրի տակ,

Դրանց նկատմամբ սեփականության որեւէ իրավունք չի կարող գրանցվել. արգելված է ՀՀ օրենսդրությամբ,

Դրանց գոյությունը վնասում է Սեւանա լճի էկոհամակարգը, լճի մաքրությունն ու ջրի որակը:

ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Ամբակում Գրիգորյանը նշանակվել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի խորհրդական:

Ուղիղ 2 տարի առաջ Քրեակատարողական ծառայության պետ նշանակված Ամբակում Գրիգորյանն ազատվել է պաշտոնից: Նրա վերադասը՝ արդարադատության նոր նախարարը, նպատակահարմար չի համարել շարունակել Գրիգորյանի հետ աշխատանքը:

Հայտնի դարձավ, որ արդարադատության նորանշանակ նախարար Սրբուհի Գալյանը գերադասել է չաշխատել Գրիգորյանի հետ, նա էլ օրենքի ուժով ազատվել է, իսկ վարչապետն էլ ստորագրել է ազատման մասին որոշումը:

Դեռեւս 2024 թվականին ՔՊ պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը հատուկ անդրադարձել էր Ամբակում Գրիգորյանին:

«Մարտի 1»-ի էջը ոնց որ փակվո՞ւմ է, թե՞ բաց է: Այդ դեպքում բոլոր քննիչները, որոնք այս գործերով ունեցել են մասնակցություն, պետք է մանրամասն ուսումնասիրվեն նշանակումներից առաջ»,- մասնավորապես ՔՊ-ական պատգամավոր Անդրանիկ Քոչարյանն էր այս տարվա մարտին հենց խորհրդարանում հիշեցրել, թե ինչ դերակատարում է ունեցել «Մարտի 1»-ի գործով Ամբակում Գրիգորյանը: Նա 2009-2013 թվականներին այս գործը քննող հատուկ քննչական ծառայության հատկապես կարեւոր գործերով քննիչն էր: «Մարտի 1»-ի էջը չի կարելի համարել փակված, եւ այնտեղ բոլորը պետք է իրենց մասով արդարացման ճանապարհ անցնեն: Էլ չեմ ասում՝ կադրային առաջխաղացման մեջ դա շատ կարեւոր է, որ մենք բոլոր այդ դրվագները հաշվի առնենք»,- հայտարարել էր Քոչարյանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԳՈՂՈՆԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Համայնքային ոստիկանության - Շենգավիթի բաժնի ծառայողները գողության վերաբերյալ ստացած օպերատիվ տեղեկությունն իրացրին մայիսի 19-ին: Գիշերվա ժամը 3:40-ին Հովսեփյան փողոցի բակերից մեկում նրանք ձերբակալեցին Մանանդյան փողոցի բնակիչ 46-ամյա տղամարդու՝ ձեռքին պայուսակներ: Նրա խուզարկությամբ հայտնաբերվեցին գլխին ամրացվող լապտեր ու պղպեղային ցողիչի սրվակ, իսկ պայուսակներում, ըստ նախանական տվյալի, գողոն էր՝ կշեռքներ, լամպեր, գործիքներ, շինարարական եւ կենցաղային իրեր: Տղամարդը խոստովանեց, որ վերջին օրերին իրենց փողոցում գտնվող սահմանափակ պատասխանատվությամբ մի ընկերության կիսակառույց շինությունից երեք անգամ կատարել է գողություն, հափշտակել անվահեցերով ութ անվադող, գործիքներ, այլ իրեր ու պարագաներ: Ըստ ընկերության մենեջերի՝ պատճառվել էր մոտ երեք միլիոն դրամի վնաս: Կազմված փաստաթղթերով հանդերձ տղամարդը ներկայացվել է նախաքննական մարմին, ձերբակալվել ու տեղափոխվել ձերբակալվածների պահման վայր: Ձեռնարկվում են միջոցներ գողոնի մյուս մասը հայտնաբերելու ուղղությամբ:

ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ

Սեւանի համայնքային ոստիկանները հայտնաբերել եւ ձերբակալել են երիտասարդին դանակահարած անձին: Այս մասին հայտնում է ՀՀ ՆԳՆ Ոստիկանությունը: Գեղարքունիքի քրեական եւ Սեւանի համայնքային ոստիկանները հայտնաբերել են երիտասարդին դանակահարած անձին. նա ձերբակալվել է: Մարմնական վնասվածք պատճառելու վերաբերյալ ահազանգը ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն ստացվել էր մայիսի 19-ի երեկոյան: «Սեւան» բժշկական կենտրոնից հայտնել էին, որ դանակահարված վիճակում բուժօգնության է տեղափոխվել 29-ամյա մի երիտասարդ: Քրեական ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության եւ Համայնքային ոստիկանության Սեւանի բաժնի ծառայողները օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել են, որ մայիսի 19-ին՝ ժամը 21:00-ին, Սեւանում նույն քաղաքի 24-ամյա բնակիչը վիճաբանել է 29-ամյա երիտասարդի հետ, ինչի ընթացքում դանակով հարվածել է նրան՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Ոստիկանների ձեռնարկած օպերատիվ միջոցառումների արդյունքում 29-ամյա երիտասարդը հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Սեւանի բաժին: Դեպքից ժամեր անց բժշկական կենտրոնից հայտնել են, որ 29-ամյա Հովհաննես Պողոսյանը գիտակցության չգալով մահացել է: Կազմված փաստաթղթերը փոխանցվել են նախաքննական մարմին: Նախաձեռնվել է քրեական վարույթ:

● *Մայիսի 11-ից 18-ը ՀՀ-ում հայտնաբերվել է առանց վարորդական իրավունքի վկայականի 131 անձ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԽԱԽՏՈՒՄ Է

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանն անցած տարի սահմանել է մարզի համայնքներում քաղաքացիների ընդունելության կարգ, երբ մարզի ղեկավարը յուրաքանչյուր ամիս Տավուշի մարզկենտրոն Իջեւանում կամ մարզի համայնքների կենտրոններից մեկում քաղաքացիների ընդունելության օր է սահմանել: Սակայն մարզպետն ինքն է խախտել քաղաքացիների ընդունելության իր սահմանած կարգը: Տավուշի մարզպետին մայիսի 5-ին տեղեկատվական հարցում եմ արել, թե իր 2025թ. հունվարի 15-ի թիվ 11-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելության նոր կարգը» այժմ գործո՞ւմ է, մարզպետ Հ. Ղալումյանը 2026 թվականի ո՞ր ամիսներին մարզի համայնքներում ե՞րբ է քաղաքացիների ընդունելություն կատարել, քանի՞ քաղաքացի է դրանց մասնակցել: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Քաղաքացիների ընդունելության կարգը գործում է, եւ մարզպետը մարզի տարբեր բնակավայրերում կայացած հանդիպումների ընթացքում կատարել է նաեւ քաղաքացիների առանձին ընդունելություն: Այսպիսով, փետրվարի 16-ին եւ 24-ին Իջեւան համայնքի Ակնաղբյուր, Լուսաձոր եւ Ենոքավան բնակավայրերում ընդունել է 8 քաղաքացու, մարտի 24-ին Բերդ համայնքի Վարագավան եւ Պառավաքար բնակավայրերում՝ 11 քաղաքացու: Ապրիլ ամսին ընդունելության համար դիմող չի եղել»: Ապրիլ ամսին մարզպետի մոտ ընդունելության համար դիմող քաղաքացիներ չեն եղել, քանի որ մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելության տեղի, օրվա մասին մարզպետի աշխատակազմը հայտարարություն չի հրապարակել: Մարզի համայնքների բազմաթիվ բնակիչներ իրենց հուզող խնդիրներով մարզպետի մոտ ընդունելության են ցանկանում արժանանալ: Մարզպետը եւ մարզպետի աշխատակազմը մարզի գյուղերում բնակիչների հետ մարզպետի չնախատեսված, պատահական հանդիպումները փորձում են ներկայացնել որպես մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելություն, ինչը տարրական մանիպուլյացիա է:

ՉՎԵՐԱԿԱՆԳՆԵՑԻՆ

2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղի հետեւանքով Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի Դիլիջան-Ճամբարակի խաչմերուկ հատվածում ճանապարհի եզրերը 10 տեղ քանդվել են: Ջրհեղեղից 2 տարի է անցել, սակայն քանդված տեղերը չեն վերականգնվել: Նախկինում Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը հայտնել է, որ դրանք 2026թ. գարնանը կվերականգնեն: Գարունն ավարտվում է, սակայն դրանց վերականգնման շինարարական աշխատանքները նույնիսկ չեն սկսվել: Այդ խնդրով նոր հարցում եմ կատարել Տավուշի մարզպետին: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «2024 թվականին մայիսի 27-ի ջրհեղեղից վնասված Դիլիջան-Իջեւան ճանապարհի հատվածների քանդված եզրերի վերականգնման աշխատանքների վերաբերյալ առաջարկում ենք դիմել ՀՀ ՏԿԵ նախարարության ճանապարհային դեպարտամենտին»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ»

ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Բարգավաճ Հայաստան ունենալու նախադայմանը սոլիդ իշխանությունն է, որը քաղաքակիրթ կերպով, հանգիստ, առանց աջ ու ձախ վիրավորելու, սպառնալու, առանց գոռգոռոցի ու առանց ստերի, ամիսը մեկ տեսակետ փոխելու, բոլոր տաղալումները ուրիշների վրա գցելու՝ կկազմի ծրագիր, պետությանը կաղահովի երաշխավորված խաղաղություն, ձեռք կբերի հուսալի դաշնակիցներ, կհամախմբի աշխարհասփյուռ հայությանը, մեկը մյուսի հետեւից կլուծի մեր քաղաքացիներին հուզող խնդիրները, որը կստեղծի արդար միջավայր, որտեղ իրար հարգելը կդառնա խաղի կանոն:

Այս մասին հայտարարություն է տարածել ԲՀԿ-ն: Հայտարարությունում, մասնավորապես, ասվում է. «Հայաստանն ունի բոլոր հնարավորությունները՝ արագ գնալու հետպատերազմյան վերականգնման, ազգային վերածննդի ճանապարհով, դառնալու ժամանակակից պետություն: Ներքին համերաշխությունն ու արդարությունը Բարգավաճ Հայաստանի հիմնական սկզբունքներն են: Բոլոր գրագետ եւ մեր երկրի շահի համար աշխատող ուժերի ու անհատների համատեղ աշխատանքով սա կդառնա իրականություն:

Ռազմավարական նպատակներ, իրողությունների ընդունում, ռիսկերի կառավարում

1. Հայաստանի փոքրությունը վերածել առավելության՝ կոմպակտություն, ճկունություն, մտավոր կապիտալ:

Հայաստանը պետք է դառնա կամուրջ՝ տարբեր ուժային կենտրոնների՝ Ռուսաստանի, Իրանի, Հնդկաստանի, Արեւմուտքի միջեւ: Մեր աշխարհագրությունը պետք է դառնա ռազմավարական առավելության գործոն:

2. Հայաստանն աշխարհասփյուռ հայերի հայրենիքն է: Պարտավոր ենք կանգնեցնել Հարավային Կովկասում հայերի պատմական բնակության տարածքի, մեր թվաքանակի կրճատման գործընթացը:

3. Ապագա իշխանությունները պետք է ստանձնեն հետպատերազմյան վերականգնման, ժամանակակից, ինքնիշխան եւ ինքնաբավ պետություն ստեղծելու պատմական առաքելությունը:

Բարգավաճ Հայաստանը

1. ներկա եւ ապագա սերունդների համար անվտանգ տուն է, յուրաքանչյուր հայի տուն, անվտանգության, սոցիալական արդարության եւ զարգացման տարածք, ժողովրդավար եւ անվտանգ միջավայր: Կրթված եւ առաջադեմ հասարակությամբ, ուժեղ եւ առողջ, քաղաքացիական հասարակությամբ:

2. Հայկական աշխարհի հենման տարածք՝ հայկական աշխարհի զարգացման կենտրոն, միջազգային հանրության կողմից ճանաչված հայկական միակ պետություն, սփյուռքի ինտեգրացիայի համար,

3. Անկայուն աշխարհում գոյատեւման եւ զարգացման մոդել, Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ երկխոսության հարթակ, տարբեր քաղաքական եւ մշակութային միջավայրերի ինտեգրվող փոքր պետություն:

Արտաքին եւ ներքին քաղաքականություն

1. Ռուսաստանի հետ հարաբերությունները՝ որպես ռազմավարական, այդ թվում՝ ռազմատեխնիկական էական մոդեռնիզացիայի հեռանկարով:

2. Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ պրագմատիկ, հաշվարկված հարաբերությունների զարգացում:

3. Արդար եւ կայուն խաղաղության ապահովման համատեքստում Արցախի հայության հիմնարար իրավունքների ճանաչման եւ պաշտպանության հետեւողական առաջմղում, ներառյալ վերադարձի իրավունքը՝ միջազգային իրավունքի եւ միջազգային մեխանիզմների շրջանակում: Արցախյան հոգեւոր եւ մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված համակարգային քայլեր:

4. Անկախ դատական համակարգ: Դատարանը՝ որպես օրենքի առջեւ հավասարության, գործադիր իշխանության զսպման եւ քաղաքացիական հասարակության պաշտպանության գլխավոր երաշխավոր:

5. Հավասար հնարավորությունների հասարակություն՝ կոռուպցիայի դեմ պայքար, սոցիալական շարժունակություն, կառավարման թվայնացում:

6. Միջին խավը՝ որպես ժողովրդավարության հենասյուն:

7. Ժողովրդագրական քաղաքականություն՝ ծնելիության խթանում եւ ընտանեկան արժեքների պաշտպանություն, հատուկ ուշադրություն կանանց առողջությանը:

8. Հասանելի, բարձրորակ եւ զարգացած առողջապահական համակարգ՝ սոցիալական հստակ եւ գրագետ շեշտադրումներով:

9. Հայրենադարձության համար պայմանների ստեղծում (աշխատատեղեր, բնակարան, ինտեգրացիա):

10. Խառը զբաղվածության մոդելների աջակցություն (առցանց աշխատանք Հայաստանից դուրս գործող գլոբալ ընկերությունների համար):

11. Բեկումնային զարգացման կրթական-հայրենասիրական շերտ. ստեղծել պայմաններ ապագա էլիտաների «ինկուբատորի» ձեւավորման համար:

12. Կրթությունը՝ որպես ռազմավարական անվտանգության ռեսուրս: Կրթական համակարգի ներառումն ազգային անվտանգության առաջնահերթությունների շարքում: Ազգային գիտական ներուժի (ԱԳՆ) զարգացման սկզբունքորեն նոր մոտեցումներ: Կրթության մեջ թվայնացում եւ նոր տեխնոլոգիաներ: Սփյուռքի հետ միասնական գիտական եւ կրթական տարածքի ստեղծում:

13. Հայրենասիրական շարունակական կրթության համակարգ: Միասնական ազգային կրթական ծրագրի ներդրում՝ սկսած տարրական դպրոցից: «Քաղաքացիական դպրոցների» ձեւավորում: Երիտասարդական շարժումների եւ մարզական ակումբների աջակցություն՝ ռազմական եւ ազգային-հայրենասիրական ուղղվածությամբ: Թմրամոլության եւ խաղամոլության դեմ պայքարի նպատակային ծրագրեր:

14. Փոքր եւ միջին ընտանեկան բիզնեսի աջակցություն եւ ինստիտուցիոնալ պաշտպանություն՝ որպես այս գործընթացների հիմք:

15. Սեփականության ինստիտուտի ամրապնդում:

16. Սփյուռքի եւ համաշխարհային ներդրումների ներգրավում կարեւորագույն ենթակառուցվածքներում, էներգետիկայում եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում:

17. Նոր արտահանման քաղաքականություն՝ հիմնված բարձրորակ հայկական ապրանքների արտադրության մասշտաբային մոտեցման եւ նոր համահայկական ապրանքանիշերի ներդրման վրա:

18. Իրական քաղաքական մեխանիզմների մշակում՝ սփյուռքը երկրի համար կարեւոր, ռազմավարական որոշումներ կայացնելու գործընթացում ներգրավելու համար՝ նոր խորհրդատվական մարմնի ստեղծման միջոցով:

ԼՈՒՐԵՐ

ՇԵՂՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԻՆ

Կարապետյան Նարեկը չունենալ այլ քաղաքացիություն. Նարեկ լինել միայն Հայաստանի քաղաքացի, գրել է «Ուժեղ Հայաստան» կուսակցության խորհրդի անդամ Նարեկ Կարապետյանը: «Վերջնականապես ինքնատիրապետումը կորցրած Փաշինյանը, ով փողոցում էն օրը կանանց էր քաշքշում, հասկացել է, որ իրական դեմքը ժողովրդի առաջ բացվել է: Նրա թիմը, որ մեզանից շուտ գիտեր նրա հոգեկան վիճակի մասին, որպեսզի շեղի իրավիճակը, սկսել է ֆեյք լուր տարածել, որ մենք էլ հերքենք, իրենք էլ երկու օր մարդկանց շեղեն»,- նշել է նա: «Կարապետյան Նարեկը չունենալ այլ քաղաքացիություն. Նարեկ լինել միայն Հայաստանի քաղաքացի: Փաշինյանը շեղել ժողովրդին իր գժություններից: Փոփոխությունները գալիս են»: *(Գ)*

Հիշեցնենք, որ երեկ ՔԿ-ն քրեական վարույթ է նախաձեռնել Նարեկ Կարապետյանի դեմ Քրեական օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնատար անձի կարգավիճակ ձեռք բերելուն կամ պահպանելուն խոչընդոտող տեղեկությունները թաքցնելը):

ՊԵՏՔ Է ՓԱԿՎԻ

Փաստաբան Արամ Վարդեւանյանը գրում է. «Քայլ 1. Հրապարակել տխմար սուտ,

Քայլ 2. Տխմար սուտի հիման վրա հարուցել քաղաքական քրեական վարույթ, բայց դրա մասին հայտարարել քաղաքական մարդու միջոցով ՆԱԽԱՊԵՍ,

Քայլ 3. Տարածել տխմար սուտը, շեղել ժողովրդին իրենց խայտառակ պահելաձեւից:

Ամփոփում. Նարեկ Կարապետյանը միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, տխմար ստերի էջը պետք է փակվի, ատելության էջը պետք է փակվի՝ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱԼԻՍ ԵՆ»: *(Գ)*

● *Ըստ վիճակագրության՝ մայիսի 11-ից 18-ը հայտնաբերվել է լուսարձակների անսարքության 42 դեպք:*

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԱՐԵԼԱՎՈՒՄ Է ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՎՏԲ-Հայաստան Բանկը թարմացրել է անշարժ գույքի գրավով սպառողական վարկերի պայմանները՝դարձնելով պրոդուկտն ավելի հասանելի եւ ճկուն մանրածախ հաճախորդների համար: Բարելավված առաջարկի շրջանակում հաճախորդները կարող են ձեւակերպել մինչեւ 30 մլն դրամի վարկ՝որպես գրավ ներկայացնելով Հայաստանի տարածքում գտնվող բնակելի կամ կոմերցիոն անշարժ գույք: Վարկի գումարը կազմում է անշարժ գույքի գնահատված արժեքի մինչեւ 60%-ը:

ՎՏԲ-Հայաստան Բանկի մանրածախ հաճախորդներին հասանելի է անշարժ գույքի գրավով սպառողական վարկ՝ մինչեւ 30 մլն ՀՀ դրամի չափով: Մինչեւ 10 մլն դրամի հայտերը կարող են դիտարկվել պարզեցված կարգով՝ առանց եկամուտների պարտադիր հաստատման:

Վարկի տոկոսադրույքը կազմում է տարեկան 17.5%-ից մինչեւ 21% (փաստացի տոկոսադրույքը՝ 18.9%-23.8%): Մարման ժամկետը՝3-ից մինչեւ 10 տարի: Թարմացված պայմանները նախատեսում են նաեւ վարկի վաղաժամկետ մարում՝առանց տույժերի, ինչպես նաեւ վարկի սպասարկման ամսական միջնորդավճարի եւ հայտի դիտարկման վճարի բացակայություն:

«Մենք կայուն հետաքրքրություն ենք տեսնում սպառողական վարկերի նկատմամբ, հատկապես այն հաճախորդների կողմից, ովքեր կողմնորոշված են երկարաժամկետ ֆինանսական լուծումների: Այս պահանջարկին արձագանքելով՝բանկը բարելավել է պրոդուկտի պայմանները՝ բարձրացնելով վարկավորման առավելագույն գումարը մինչեւ 30 մլն ՀՀ դրամ: Ընդ որում, մինչեւ 10 մլն դրամի վարկերը հասանելի են ձեւակերպման պարզեցված կարգով: Թարմացված պայմանները հաճախորդներին հնարավորություն են տալիս ներգրավել ավելի խոշոր գումարներ՝երկար ժամկետով: Այս փոփոխությունները հաշվի առնելով՝ մենք նախատեսում ենք ընթացիկ տարում ավելացնել վարկային պորտֆելը 30%-ով»,- մեկնաբանել է ՎՏԲ-Հայաստան Բանկի Գլխավոր տնօրենի - Տնօրինության նախագահի տեղակալ Տարաս Կլադչենկոն:

Վարկը կարելի է ձեւակերպել բանկի ցանկացած մասնաճյուղում՝ ներկայացնելով սոցիալական քարտ, անձնագիր կամ ID-քարտ (վարկառուի, համավարկառուի եւ գրավատուի), ինչպես նաեւ անշարժ գույքի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր:

Պրոդուկտի մանրամասն պայմաններին կարելի է ծանոթանալ ՎՏԲ-Հայաստան Բանկի կայքում, բանկի մասնաճյուղերում կամ զանգահարելով Կոնտակտային կենտրոն՝ 87 87 հեռախոսահամարով:

ՎՏԲ-Հայաստան Բանկը

վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

TEAM HOLDING

ԴՈԼԱՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԵԿՆԱՐԿ

20 մայիսի, 2026թ., Երեւան. Team Holding-ը հայտարարում է անվանական արժեկտրոնային դոլարային պարտատոմսերի տեղաբաշխման երրորդ՝ եզրափակիչ փուլի մեկնարկի մասին:

Նախորդ երկու փուլերի տեղաբաշխումներն ավարտվել են նախատեսված ժամկետից շուտ՝ ներդրողների կողմից բարձր պահանջարկի եւ շուկայի կայուն հետաքրքրվածության պայմաններում: Team Holding-ի պարտատոմսերը շարունակաբար ձեւավորում են բարձր ակտիվություն ինչպես տեղական, այնպես էլ միջազգային ներդրողների շրջանում:

Տեղաբաշխումն իրականացվում է Freedom Broker Armenia ներդրումային ընկերության միջոցով՝ միջազգային չափանիշներին համապատասխան եւ լիարժեք թափանցիկ գործընթաց ապահովելով:

Երրորդ՝ եզրափակիչ փուլի շրջանակում տեղաբաշխվող դոլարային պարտատոմսերի պայմաններն են՝ անվանական ծավալը՝ 12,5 միլիոն ԱՄՆ դոլար, մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 ԱՄՆ դոլար, արժեկտրոնի եկամտաբերությունը՝ 8,65%, շրջանառության ժամկետը՝ 48 ամիս: Արժեկտրոնները կվճարվեն կիսամյակային պարբերականությամբ:

Տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցները Team Holding-ը կուղղի իր հիմնական ռազմավարական ուղղությունների զարգացմանը՝ ենթակառուցվածքային նախագծերի իրականացմանը, նորարարական լուծումների ներդրմանը, ինչպես նաեւ ընթացիկ նախագծերի ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանը:

«Բարձր գնահատելով այս ողջ ընթացքում մեր ընկերության ու թիմի հանդեպ ներդրողների վստահությունը՝ մուտք ենք գործում պարտատոմսերի տեղաբաշխման եզրափակիչ փուլ: Այս ճանապարհին մեզ միացած գործընկերների՝ թե՛ անհատների, թե՛ բիզնեսների հավատը մեզ պարտավորեցնում է էլ ավելի մեծ եռանդով շարունակելու մեր՝ ենթակառուցվածքների եւ նորարարության զարգացման ուղղությամբ նախագծերը՝ հեռանկարում ունենալով միասին առավել մրցունակ տնտեսության ձեւավորման գաղափարը», - ասում է Team ընկերությունների խմբի համահիմնադիր Հայկ Եսայանը:

Freedom Broker Armenia-ի տնօրեն Հովակ Հովակիմյանը հավելում է. «Team Holding-ի պարտատոմսերի՝ նախորդ երկու փուլերի նկատմամբ արձանագրված բարձր պահանջարկը վկայում է, որ Հայաստանի կապիտալի շուկայում ձեւավորվում է հասուն եւ երկարաժամկետ մտածողությամբ ներդրումային միջավայր, որտեղ ներդրողները նախապատվությունը տալիս են կայուն զարգացման ռազմավարություն ունեցող եւ բարձր թափանցիկությամբ գործող ընկերություններին»:

Պարտատոմսերը հնարավոր է ձեռք բերել ինչպես առցանց՝ Freedom Broker Armenia հարթակի միջոցով, այնպես էլ դիմելով ընկերության գրասենյակ կամ ներկայացնելով հայտ ընկերության պաշտոնական կայքում:

Ծրագրային ազդագրով նախատեսված տեղաբաշխման ընդհանուր ծավալը կազմում է 31,500,000 ԱՄՆ դոլար եւ 1.4 միլիարդ ՀՀ դրամ:

Team Holding-ի պարտատոմսերի ծրագրային ազդագիրը գրանցվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում՝ 2025 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1/417Ա որոշմամբ:

Թողարկողի եւ առաջարկվող պարտատոմսերի բոլոր պայմանները, ինչպես նաեւ դրանց առնչվող ռիսկերը ներկայացված են ծրագրային ազդագրում: «Թիմ Հոլդինգ» ՓԲԸ-ն, հիմնադրված 2021 թվականին Հայկ եւ Ալեքսանդր Եսայանների կողմից, ձեւավորվել է որպես դուստր եւ այլ ընկերություններում ներդրումներ կատարող «հոլդինգային» ընկերություն, որը միավորում է դուստր ընկերություններ տարբեր ոլորտներում եւ ստեղծում բազմաճյուղ կորպորատիվ էկոհամակարգ: Հոլդինգը միավորել է կախյալ եւ դուստր ընկերություններ տարբեր ոլորտներից՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ եւ համակարգային ինտեգրացիա, ֆինթեք, լոգիստիկա եւ էլեկտրոնային առեւտուր, էներգետիկա եւ շինարարություն, հյուրընկալության ոլորտ, գինեգործություն եւ բարձրորակ սպառողական ապրանքների մատակարարում: Այսօր Հոլդինգի գործունեությունը ընդգրկում է Հայաստանի տնտեսության մի շարք առանցքային ուղղություններ:

Freedom Broker Armenia-ն (իրավաբանական անվանումը՝ «Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ)՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված ներդրումային ընկերություն է, որն ապահովում է մուտք դեպի տեղական եւ միջազգային ֆոնդային շուկաներ: Ընկերությունն առաջարկում է ներդրումային ծառայությունների ամբողջական շրջանակ՝բորքերային, արժեթղթերի պահառության եւ արժեթղթերի տեղաբաշխման ծառայություններ, որոնց շրջանակում հաճախորդները ստանում են տեղական եւ միջազգային խոշորագույն արժեթղթերի շուկաներում ուղղակի ներդրումներ կատարելու հնարավորություն մեր ժամանակակից առցանց հարթակի միջոցով:

Freedom Broker Armenia-ն հանդիսանում է Freedom Holding Corp. միջազգային ֆինանսական հոլդինգի մաս, որի բաժնետոմսերը ցուցակված են NASDAQ ֆոնդային բորսայում (FRHC): Հոլդինգի շուկայական կապիտալիզացիան կազմում է 7.5 մլրդ ԱՄՆ դոլար, ակտիվները՝ 12.4 մլրդ դոլար (31.03.2026): Freedom Holding Corp.-ը ներկայացված է ԱՄՆ-ում, Եվրոպայում, ԱՊՀ երկրներում եւ Ասիայում՝ ունենալով ավելի քան 11 000 աշխատակից, 232 գրասենյակ, եւ 11 միլիոն օգտատեր թվային էկոհամակարգում:

ԲՈՆՈՒՍՆԵՐ՝ IDRAM&IDBANK-ԻՑ

Երեւանի փողոցներում արդեն զգացվում է ամառվա ռիթմը. մարդիկ ավելի հաճախ են ընտրում քայլել, աշխատել բացօթյա սրճարաններում, հանդիպել ընկերներին դրսում կամ պարզապես մի քանի րոպե կանգ առնել իրենց սիրելի iced latte-ի համար: Ամառային սեզոնի ամենահաճելի փոքր սովորություններից մեկը դարձել է սառը սուրճը՝ առավոտյան էներգիայի, կեսօրի դադարի կամ երեկոյան զբոսանքի անբաժան մասը:

Այս օրերին հատկապես նկատելի է, թե ինչպես են սրճարանները լցվում էսպրեսոյի հաճելի բույրով: Իսկ եթե այս ամենին ավելանա նաեւ անակնկալ բոնուս՝ ամառային սուրճը դառնում է կրկնակի հաճույք:

2026թ. մայիսի 20-ից մինչեւ հունիսի 10-ը ներառյալ Idram&IDBank հավելվածով հետեւյալ վաճառակետերում QR վճարում կատարելիս կստանաք 30% idplus բոնուս՝

Jermots
Cofix
Surf Coffee
Cultura Coffee
Lumen Coffee
Prepa

Պարզապես վճարեք Idram&IDBank հավելվածով, իսկ idplus բոնուսներն ավտոմատ կկուտակվեն: Հետո դրանք հնարավոր կլինի օգտագործել նույն վաճառակետերում:

Վայելեք մի բաժակ սառը սուրճ, ամառային զովացնող ըմպելիք, համեղ լանչ ու քաղցրավենիք եւ միաժամանակ կուտակեք բոնուսներ:

ԻԴՐԱՄ ԵՎ IDBANK

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ Է

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ Է ՔԱՂՑԿԵՂԸ

Ավստրալացի հայտնի երգչուհի, երգահան եւ դերասանուհի Քայլի Մինոուգը, որը համարվում է համաշխարհային փոփ երաժշտության ամենահայտնի աստղերից մեկը, առաջին անգամ պատմել է, որ 2021 թվականին կրկին պայքարել է կրծքագեղձի քաղցկեղի դեմ: Բացահայտումն արվել է նրա նոր «Kylie» վավերագրական սերիալում, որը ցուցադրվում է Netflix-ում:

57-ամյա երգչուհին նշել է, որ երկրորդ ախտորոշումը տարիներ շարունակ գաղտնի է պահել, քանի որ առաջին հիվանդության ժամանակ չափազանց մեծ հանրային ուշադրության կենտրոնում էր հայտնվել:

«Ես շատ էի վախենում այն ամենից, ինչ սպասվում էր ինձ»,-խոստովանել է Քայլի Մինոուգը ֆիլմում:

Նրա խոսքով՝ երկրորդ անգամ քաղցկեղ ախտորոշվել է 2021 թվականի սկզբին, սակայն այս անգամ նա որոշել է այդ մասին չհայտնել հանրությանը:

«Ես կարողացա դա պահել միայն ինձ համար. ոչ այնպես, ինչպես առաջին անգամ: Բարեբախտաբար, ես կրկին հաղթահարեցի դա, եւ հիմա ամեն ինչ լավ է», -ասել է երգչուհին:

Քայլի Մինոուգը պատմել է նաեւ, որ այդ ժամանակահատվածում հոգեբանական ծանր վիճակում էր եւ նույնիսկ չէր ցանկանում տնից դուրս գալ: Չնայած դրան՝ նա շարունակել է ստեղծագործել: Նրա մեծ հաջողություն ունեցած «Padam Padam» երգի թողարկումից հետո շատերը չէին էլ պատկերացնում, թե ինչ դժվարությունների միջով է անցնում երգչուհին: Նա նշել է, որ իր ապրումները արտահայտել է նաեւ «Story» երգում, որը ներառված է «Tension» ալբոմում:

Հիշեցնենք, որ Քայլի Մինոուգի մոտ առաջին անգամ կրծքագեղձի քաղցկեղ ախտորոշվել էր 2005 թվականին: Նա անցել էր վիրահատություն եւ քիմիաթերապիա, իսկ 2006 թվականին բժիշկները հայտարարել էին, որ երգչուհին հաղթահարել է հիվանդությունը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿՈՇՏ Է ԱՐՁԱԳԱՆՔԵԼ

«Մանչեսթեր Յունայթեդի» եւ Անգլիայի ազգային հավաքականի նախկին հարձակվող Ուեյն Ռունին մեկնաբանել է Մոհամեդ Սալահի վերջին հայտարարությունները «Լիվերպուլի» խաղի վերաբերյալ, գրում է armsport-ը: Ավելի վաղ եգիպտոսցի հարձակվողը սոցցանցերի իր էջում գրել էր, որ «Լիվերպուլին» անհրաժեշտ է վերադարձնել իր «հարձակողական ինքնությունը», քանի որ մրցակիցներն այլեւս չեն վախենում թիմից: «Առնե Սլոտի փոխարեն ես կիրակի օրը Սալահին նույնիսկ մարզադաշտի մոտ չէի թողնի: Ըստ էության, նա նռնակ նետեց՝ բացահայտ հայտարարելով, որ չի հավատում մարզչին»,- Ռունիի խոսքերն է մեջբերում BBC-ն:

Հիշեցնենք, որ ընթացիկ մրցաշրջանի ավարտից հետո Սալահն ազատ գործակալի կարգավիճակով կհեռանա «Լիվերպուլից», սակայն նրա ապագան դեռեւս անորոշ է մնում: Նա մերսիսայդյան ակումբի կազմում անցկացրել է 9 տարի՝ թիմ տեղափոխվելով դեռեւս 2017 թվականին՝Յուրգեն Կլոպի գլխավորության օրոք:

«ՌԵԱԼԸ» ՎՃԱՐԵԼ Է

Մադրիդի «Ռեալը» վճռորոշ քայլ է կատարել Ժոզե Մոուրինյուի հետ պայմանագիր կնքելու ուղղությամբ: Sky Sport Italia-ի տեղեկություններով՝ մադրիդյան ակումբն արդեն վճարել է «Բենֆիկային» պահանջվող 3 միլիոն եվրոն՝ հրաժարագնի այն չափը, որը թույլ է տալիս մարզչին խզել պայմանագիրը պորտուգալական ակումբի հետ, հայտնում է armsport-ը: Sky Sport Italia-ի փոխանցմամբ՝ Մոուրինյուի եւ «Ռեալի» միջեւ համաձայնությունն արդեն ձեռք է բերվել. կողմերը համաձայնեցրել են երկամյա պայմանագիր, իսկ պաշտոնական հայտարարությունը կարող է արվել մոտ ժամանակներս: Մոուրինյուի համար սա վերադարձ կլինի Մադրիդ 13 տարվա դադարից հետո: Պորտուգալացին «Ռեալում» աշխատել է 2010-ից 2013 թվականներին եւ այդ ընթացքում նվաճել Իսպանիայի չեմպիոնի տիտղոսը, երկրի գավաթն ու Սուպերգավաթը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԲԱՑԱՌԻԿ ՆՎԱՃՈՒՄ

Լոնդոնի «Արսենալի» 44-ամյա գլխավոր մարզիչ Միկել Արտետան դարձել է Անգլիայի Պրեմիեր լիգայի պատմության մեջ առաջին նախկին ֆուտբոլիստը, որին հաջողվել է նվաճել երկրի չեմպիոնի տիտղոսը որպես թիմի ղեկավար: Այս մասին հայտնում է Football on TNT Sports-ը, գրում է armsport-ը: Մինչ մարզչական կարիերային անցնելը, Արտետան երկար տարիներ հանդես է եկել Անգլիայի բարձրագույն դիվիզիոնում՝ պաշտպանելով «Էվերթոնի» (209 հանդիպում) եւ իր ներկայիս ակումբի՝ «Արսենալի» (150 հանդիպում) գույները: Մայիսի 19-ին Արտետայի գլխավորած «Արսենալը» ժամկետից շուտ հռչակվեց 2025/26 մրցաշրջանի ԱՊԼ չեմպիոն՝ վերջ դնելով տիտղոսազուրկ 22-ամյա դադարին: Այս պատմական իրադարձությունը հնարավոր դարձավ 37-րդ տուրից հետո. մինչ «զինագործները» հաղթանակ էին տոնում «Բարնլիի» նկատմամբ, նրանց գլխավոր հետապնդող «Մանչեսթեր Սիթին» միավորներ կորցրեց «Բորնմուտի» հետ արտագնա խաղում՝ գրանցելով 1-1 հաշիվը: Այսպիսով, վաստակելով 82 միավոր՝ լոնդոնյան ակումբն ապահովեց Անգլիայի ոսկե մեդալները: Մրցաշարային աղյուսակի երկրորդ հորիզոնականը զբաղեցնող Պեպ Գվարդիոլայի «Մանչեսթեր Սիթին» 37 խաղից հետո ունի 78 միավոր եւ կորցրել է առաջատարին շրջանցելու բոլոր մաթեմատիկական հնարավորությունները

ԿԱԶՄԵՐԸ

Բուլղարիայի Սամոկով քաղաքում մայիսի 20-ից 24-ը կայանալու է ըմբշամարտի մինչեւ 15 տարեկանների Եվրոպայի առաջնությունը, տեղեկացնում է armsport-ը: Հայաստանն այս ստուգատեսին կմասնակցի ամբողջական թիմերով՝ներկայացուցիչներ ունենալով ինչպես հունահռոմեական, այնպես էլ ազատ ոճի ըմբշամարտում: Այս մասին հայտնում է ՀԸՖ-ի մամուլի ծառայությունը:

Հունահռոմեական ոճ.

- 38 կգ Գոռ Կարապետյան
- 41 կգ Սեւակ Մանուկյան
- 44 կգ Փաշա Խուդոյան
- 48 կգ Միհրան Թաթոյան
- 52 կգ Վարդան Սահակյան
- 57 կգ Արայիկ Խեմչյան
- 62 կգ Ալեքս Գեւորգյան
- 68 կգ Պավել Նազարյան
- 75 կգ Արման Գինոսյան
- 85 կգ Արման Թովմասյան

Ազատ ոճ.

- 38 կգ Նորայր Գեւորգյան
- 41 կգ Տիգրան Աղաջանյան
- 44 կգ Ալեքս Ղազարյան
- 48 կգ Ռոման Հովհաննիսյան
- 52 կգ Նարեկ Դալլաքյան
- 57 կգ Ատոմ Եսայան
- 62 կգ Միեր Պապիկյան
- 68 կգ Շահեն Մարտիրոսյան
- 75 կգ Դավիթ Վարդանյան
- 85 կգ Արմեն Մոսեսյան

Եվրոպայի առաջնության մրցումային առաջին օրը պայքարը սկսում են հունահռոմեական ոճի ըմբիշները: Մայիսի 20-ին Հայաստանի հավաքականից գորգ էին դուրս գալու եւ մեդալների համար պայքարելու 7 ներկայացուցիչներ՝ Գոռ Կարապետյանը, Սեւակ Մանուկյանը, Փաշա Խուդոյանը, Միհրան Թաթոյանը, Վարդան Սահակյանը, Արայիկ Խեմչյանը եւ Ալեքս Գեւորգյանը:

● *Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում մայիսի 23-ին՝ժամը 12:00-ին, կկայանա «Առյուծն ու խաղալիքը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ սարքավորումներով է աղահովվում «ՀԱԷԿ»-ի սեյսմիկ անվտանգությունը:

Գարիկ Մկրտչյան, 66 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. «ՀԱԷԿ»-ի սեյսմիկ անվտանգության հիմնական գրավականը կայանում է նրանում, որ «ՀԱԷԿ»-ի հատուկ կարեւոր շենք-շինությունները, սարքերը եւ համակարգերը նախագծված եւ կառուցված են հարթակում սպասվելիք առավելագույն (0,35g) արագացման երկրաշարժին համապատասխան, որպեսզի կատարեն իրենց ֆունկցիաները, ինչպես երկրաշարժի ժամանակ, այնպես էլ նրանից հետո: Ինչ վերաբերում է սեյսմիկ սարքավորումներին, ապա «ՀԱԷԿ»-ում տեղակայված է հակասեյսմիկ պաշտպանության ավտոմատ համակարգ (СИАЗ), որը ունի երեք տարբեր դիտակետեր՝ տեղակայված ռեակտորի շուրջը տարբեր ուղղություններով: Երբ սեյսմիկ ալիքները հասնեն դրանցից առնվազն 2 դիտակետերի եւ ալիքի արագացման մեծությունը գերազանցի սահմանային արժեքը, ապա տեղի կունենա ռեակտորի վթարային անջատում:

Հարկ է նշել, որ աշխարհի ոչ բոլոր ատոմակայաններն ունեն վթարային անջատման հակասեյսմիկ ավտոմատ համակարգեր, իսկ որոնք էլ որ ունեն, նրանցում եւս գործում է նույն սկզբունքը ինչ-որ «ՀԱԷԿ»-ում, այսինքն, վթարային անջատում իրականացվում է, երբ երկրաշարժի ժամանակ սեյսմիկ ալիքները հասնում են հարթակում տեղակայված դիտակետերին:

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ովքե՞ր կարող են մասնակցել հանրային հատվածի հաշվապահի որակավորման քննությանը:

Արսեն Հակոբյան, 35 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 487-Ն հրամանով հաստատված հանրային հատվածի հաշվապահի որակավորման կարգի համաձայն՝ քննություններին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր

- ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, կամ
- ունեն բարձրագույն կրթություն եւ առնվազն 18 ամսվա մասնագիտական աշխատանքի փորձ, կամ
- ունեն ընդհանուր (լրիվ) միջնակարգ կրթություն կամ միջին մասնագիտական կրթություն (տեխնիկում, քոլեջ եւ այլն) եւ 3 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ, կամ
- դիմում ներկայացնելու օրվա դրությամբ հանրային հատվածի կազմակերպությունում զբաղեցնում են հաշվապահական ծառայության ղեկավարի պաշտոն (գլխավոր հաշվապահ):

ՀՀ ֆինանսների նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Սյունիքի մարզում իրանցի վարորդը հեղուկ գազ տեղափոխող «Volvo» մակնիշի կցորդիչով բեռնատարով կողաշրջվել է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 4 + 8 + 10 + 15
Կոտայքի լեռներ	+ 4 + 7 + 11 + 14
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 9 + 13 + 16
Գեղարքունիք	+ 3 + 7 + 11 + 15
Լոռի	+ 6 + 10 + 14 + 17
Տավուշ	+ 5 + 9 + 15 + 18
Արագածոտնի լեռներ	+ 3 + 6 + 10 + 14
Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 9 + 13 + 17

Արարատ	+ 9 + 12 + 15 + 18
Արմավիր	+ 10 + 13 + 16 + 19
Վայոց ձորի լեռներ	+ 3 + 6 + 10 + 14
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 13 + 17 + 20
Սյունիքի լեռներ	+ 2 + 5 + 10 + 13
Սյունիքի նախալեռներ	+ 5 + 9 + 15 + 18
Սյունիքի հովիտներ	+ 10 + 14 + 21 + 24
Երեւան	+ 10 + 12 + 18 + 20

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.05.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*